

սեղեկ ըմբռնեց սպառնալիքին սաստկութիւնը եւ վերադարձուց զանոնք: Կեսարացին իր պաշտպանն էր. իսկ անոր առջեւ կը պատկառէին թէ Կաթողիկոսն եւ թէ չրջակայքը:

Հարկ էր շարունակել սկսուած գործը. եւ Մովսէս արծարծեց իւր ոյժերը: «Ընդ այն ժամանակս Մովսէս . . . տակաւին վարդապետ գոլով՝ քարոզութեամբ չրջէր յաշխարհի եւ լուսաւորէր զամենայն մարդիկ իբրեւ զարեգակն¹⁶»: Կը չրջէր եւ կը բանար քաղաքներու եւ գիւղերու մէջ դպրոցներ, եւ կը կարգէր անոնց վրայ իւր ձեռքին տակ դաստիարակուած ուսուցիչներ: «Վասն հաստատութեան հաւատոյս եւ կրօնիցս մերոյ հաստատեցին» կ'ըսէ Դաւրիժեցի, Պօղոս եւ Մովսէս վարդապետները «դպրատուն ի պատշաճաւոր տեղիս՝ ի գիւղն Աստապատ եւ ի Շօթօթ, զի չրջակայ գեղօրէցն անդր ժողովեացին մանկունք առ ի յուսումն: Սոյնպէս եւ ի գիւղն Ագուլիս հաստատեցին դպրատուն եւ կարգեցին ի վերայ մանկանցն դպրապետ զտէր Անդրէասն, յորում տեղւոջ ժողովեցան մանկունք որպէս թէ յիսուն կամ վաթսուն. եւ տէր Անդրէասն էր վերակացու, որ հովուէր զմանկունսն եւ ուսուցանէր գուսումն հասարակաց մերս եկեղեցոյ¹⁷»: Տէր Անդրէասի նահատակութենէն ետքը (1617)

¹⁶ Դաւրիժ. 314:

¹⁷ Դաւրիժ. 355: